Ջեքսոնի պատմությունը

Ջեքսոնը մեծացել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հավատարիմ անդամների ընտանիքում: Նա ունի սիրող ծնողներ և հատկապես մտերիմ է քրոջ՝ Սելենայի հետ:

Ջեքսոնը սիրում է ավետարանը և ունի վկայություն Հիսուս Քրիստոսի և Վերականգնման մասին: Նա հայտնի է իր կենսուրախ և մարդամոտ բնավորությամբ: Սակայն վերջերս նրա կենսուրախությունը վերածվել է տխրության, և նա գնալով ավելի ինքնամփոփ է դառնում: Ջեքսոնը գաղտնիք ունի և չգիտի, թե ինչ անի դրա հետ:

Նա վաղուց հասկացել է, որ իրեն ավելի շատ են գրավում տղամարդիկ, քան կանայք: Երկար տարիներ նա փորձել է անտեսել այդ զգացմունքները կամ ձևացնել, թե դրանք գոյություն չունեն: Քանի որ այդ թեմայի մասին իրենց տանը երբեք չեն խոսել, նա կարծել է, որ դա արգելված խոսակցություն է: Երբեմն նրա ընկերները նվաստացուցիչ մեկնաբանություններ են արել գեյերի մասին: Եկեղեցու ուսուցիչներից և ղեկավարներից նա միշտ լսել է, որ համասեռամոլությունը լուրջ մեղք է:

Իր միսիայից առաջ Ջեքսոնը շարունակ աղաչում էր Աստծուն, որ վերացնի տղամարդկանց հանդեպ իր հրապուրանքը: Նա վստահ էր, որ եթե ծառայեր միսիայում, իր զգացմունքները կփոխվեին: Այնուամենայնիվ, միսիայից հետո էլ տղամարդկանց հանդեպ Ջեքսոնի հրապուրանքը չանցավ: Ջեքսոնը հուսահատորեն ցանկանում է խոսել ինչ-որ մեկի հետ, բայց վախը նրան ստիպում է լռել:

Սելենան նկատել էր, որ եղբայրը զգացմունքային առումով հեռացել էր իրենց ընտանիքից: Նա ցավ էր տեսնում եղբոր աչքերում: Նա աղոթում էր Ջեքսոնի համար, որ իմանար, թե ինչպես օգներ նրան:

Այսօր առավոտյան Սելենան հարցրեց Ջեքսոնին, թե արդյոք կարո՞ղ են միասին գնալ զբոսնելու: Նա դժկամությամբ համաձայնեց: Քայլելիս նրանք խոսում էին առօրյա զբաղմունքների մասին: Սելենային նույնիսկ հաջողվեց ժպիտ առաջացնել Ջեքսոնի դեմքին: Վերջում Սելենան ասաց. «Ջեքսոն, ես գիտեմ, որ ինչ-որ բան այն չէ: Ես դա տեսնում եմ քո աչքերում: Խնդրու՛մ եմ, ասա ինձ: Ես շատ եմ անհանգստանում քեզ համար»:

Տևական ժամանակ Ջեքսոնը լուռ կանգնած էր: Հետո արցունքները սկսեցին հոսել նրա դեմքի վրայով: Ի վերջո, զգացմունքների հեղեղը պայթեց ներսից, և դողդոջուն ձայնով նա ասաց. «Սելենա, ես գեյ եմ և վաղուց այդպիսին եմ եղել: Ես չգիտեմ ինչ անել: Ես վախենում եմ, թե ինչ կասեն մայրիկն ու հայրիկը, եթե իմանան: Մեր ընտանիքի մյուս անդամներն ամաչելո՞ ն են իմ պատճառով: Արդյո՞ք իմ ընկերները կցանկանան շփվել ինձ հետ, եթե իմանան, որ ես գեյ եմ: Ի՞նչ կլինի եկեղեցու իմ անդամության հետ, եթե ես ասեմ եպիսկոպոսին: Ես չեմ պատկերացնում, թե ինչպես կարող եմ երբևէ երջանիկ լինել և ընտանիք ունենալ: Ես այնպիսի զգացում ունեմ, որ Աստված ինձ լքել է»:

Ջեքսոնը գլուխը կախեց ու հայացքը հառեց գետնին: Երկար դադարից հետո նա կամացուկ ասաց. «Սելենա, կներես, որ հիասթափեցրի քեզ: Խնդրում եմ, չասես ոչ մեկին: Ես ինձ այնքան կորած ու շփոթված եմ զգում»:

Քննարկման հարցեր

1. Ի՞նչ զգացումներ եք ունենում Ջեքսոնի փորձառության մասին մտածելիս: Ինչո՞ւ է դժվար նույնասեռական հրապուրանքի մասին խոսելը ընտանիքի անդամի, մտերիմ ընկերոջ կամ եկեղեցու ղեկավարի հետ:

2. Ի՞նչ կզգայիք, եթե Սելենայի տեղը լինեիք: Ի՞նչ կարող էր անել Սելենան՝ ըմբռնումով և կարեկցանքով արձագանքելու համար:

3. Նույնասեռական հրապուրանքի մասին Տիրոջ ուսմունքների ճիշտ ընկալումն ինչպե՞ս կարող է օգնել Սելենային և Ջեքսոնին: Ինչո՞ւ է երբեմն դժվար լինում ընդունել այս ուսմունքները:

4. Ինչպե՞ս կարող են Ջեքսոնն ու Սելենան նույնասեռական գրավչությանը նայել հավերժական տեսանկյունից:

5. Որտեղի՞ց Ջեքսոնը կարող է ստանալ առաջնորդություն, քաջալերանք և օգնություն:

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.